բնագրի մէջ ոչ մի տեղ. բացառութիւն է 231ա. «Տ՚ն Ստեփաննոսի է սուրբ աւետարանս» խօսքերը, որ գրուած են խեցոսկով։ Բնագրի համար յիշատակարանում կայ այսպիսի նկատողութիւն. «Եւ զսա լիցին հանապազ ընթերցեալ ի սուրբ եկեղեցւոջս (Նորավանից), զի սոյգ ի հին յաւրինակաց գրեցաւ»։

Նկարուած են ա) Աւետարանից հատուած, խոշոր երկաթագրով 90ա. բնագիրը 15,3×9 սմ., մեր նկարը 14½×8,6սմ., քիչ փոքր։

բ) Առաջքներից Եւսեբիի և Կարպիանոսի թղթ. 1ա բնագիրը և մեր նկարը նոյն մեծութեամբ։

գ) 1բ. միջին երկաթագրով բնագիրը 10,8×11,3 սմ., մեր նկարը 10½×11 սմ.։

դ) Աւետարանացուցի հատուած 232բ. փոքր երկաթագրով։ Այս նոյն գիրը գործադրում է գրիչը աւետարանների մէջ տողավերջին, եթէ տեղ չի լինում խոշոր երկաթագրով վանկը վերջացնելու. տես **44** նկարի մէջ երկրորդ, իններորդ, տասնումէկ և տասներեքերորդ տողերի վերջերում։ Լաւագոյն ապացոյց, թէ երկուսն էլ նոյն գրչի գործ են։

46. 71. Մատ. Ս. Էջմ. Գ. № 364./2877. Աւետարան, քիչ զարդերով, մագաղաթ 33×26 սմ., թերթ 218։ ԳԻՐ. Ուղղանկիւն, միջակ մեծութեան երկաթագիր, (նման 8որ գիւղի պահպանակի աւետարանի գրին, որ ԺԱ. դարու գործ է. տ. պատկեր և § **48**) երկէջ, 27×7½ սմ.։ Թանաքի գոյնը ձգած, դեղնաւուն։ ԳՐԻՉ. Գրիգոր գրագիր.։ ՍՏԱՑՈՂ. Առաջինն անյայտ, վերջից թերի լինելու պատճառով։ Երկրորդ ստացողներ «ՈԼԲ»=1183 թուին «Խոսրովիդուխտ եւ Գոհարն եւ Սուքիաս երէց վանաց». առաջիններն ստացել և նորոգել են տուել երկրորդի համար։ ԺԱՄԱՆԱԿ. Անյայտ. Ժ—ԺԱ. դարու գործ ըստ գրչութեան աւետարանների։

Նկարուած են ա) 74բ. բնագիրը. 6,6սմ. առաջին տող, մեր նկարը 6 սմ. քիչ փոքր։ Շեղագիր։ Խաչի արուեստն ու գոյները նոյն միւս զարդերի հետ։ Շեղագիր յիշատակարանի թանաքը նոյն՝ Զեռագրի թանաքի հետ, գունատ, դեղնաւուն։ Նոյն գիրը 112ա. Ղուկասու սկզբնաւորութեան լուսանցքում «զկնի տ՚ր յերկնցին»։ Այս շեղագիրը, որ իւր ձևերով միանգամայն նորի տպաւորութիւն է անում, համարում ենք Աւետարանի գրչի գործ, Ժ—ԺԱ. դարու։

բ) 219ա. 5½×14,2 սմ., երկրորդ տողը, մեր նկարը 2½×7 սմ.։ ԺԱ-ՄԱՆԱԿ. փրկչական 1211 թ., Հայոց թվ. ՈԿ. տես նկարը **71.** անվարժ շեղագրով։

47. Մատ. Ս. Էջմ. № 236/283, (Կ. 229) Աւետարան, հաստ մագաղաթ 21½×15½ սմ.,361 թերթ։ ԳԻՐ։ բոլորաձև երկաթագիր, մի իջեան, 15½×11 սմ.։ Գրիչն է Քրիստափոր գրիչ։ ՍՏԱՑՈՂ. Սիմեւոն քահանայ. ԺԱՄԱՆԱԿ 1033 թ. փրկչական ,ՆՁԲ. 361ա.։ Յիշատակարանը փոքր երկաթագրով բոլորագրի շատ ձևերով։

Նկարուած է 263բ., բնագիրը 9×10½ սմ. մեր նկարը 8,8×10սմ., գրեթէ նոյն մեծութեամբ։